

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հանգես Հայագիտութեան» — «Zeitschrift für armenische Philologie» — Այս նոր մասնագիտական հանգեսի առաջին տետրի մասին մենք խօսել ենք «Մուրճի» անցեալ տարուայ վերջին համարում։ Ներկայ տետրի մէջ պ. Ֆինկը իր յօդուածի շարունակութեան ընթացքում հետաքեական ձեռագրից չիշատակում է դարձեալ 31 վերնագիրներ, որոնցից ի միջի ալլոց ուշադրութեան արժանի է **Նեղոս Գոմապառուի «Նարգիզութիւն պարսիարեական արձուցն»** (հայերէն և լատինէն հրատարակեց Ֆ. Ն. Ֆինկ, Ս. Եջմիածին, 1902)։

Հեղինակը իր յօդուածին կցել է Երուսաղէմի և Նիպոտի թագաւորների, ինչպէս և Անտիոքիայի իշխանների ծննդաբանական ցուցակը, որ ամփոփումն է նախկին տետրում չիշատակուած «Աղգարանութիւն թագաւորացն Երուսաղէմի և թագաւորացն Նիպոտի» և «Աղգարանութիւն Բրնձոյն Անտիոք»-ի։

Պ. Այսարեանը իր «Վանի բարբառի հնչյունաբանութիւն» յօդուածի մէջ խօսում է «ա», «այ», «եա», «եայ», «եա», «եա», «իւ», «ոյ» և «ոյլ» կրկնաձայնների ու բոլոր բազմաձայնների փոփոխութիւնների մասին, որոնք առաջ են գալիս Վանի բարբառում։

Միւս յօդուածներից առանձին ուշադրութեան արժանի է Ենայի համալսարանի պրոֆէսոր Հ. Գէլցելի «Եզնիկ և պարսկական կրօնի սիստեմի զարգացումը»։ Վիեննայի

Միսիթարեան հայրերից Գր. Կալամկարը պատրաստում է Եզնիկ Կողբացու յալտնի գրուածքի («Նեղ-դէմ աղանդոյ») քննական հրատարակութիւնը։ Հայր Կալամկարի զրգմամբ և օգնութեամբ Յ. Մ. Շմիդ թարգմանել է այդ գրուածքը գերմաներէն, որ և լոյս է տեսել 1890-ին Իբրև Վիեննայի Միսիթարեան միաբանութեան գերմաներէն լեզուով հրատարակելիք «Հայկական մատենադարանի» առաջին հատոր։ Պրոֆ. Գէլցելն ահա Եզնիկի այս հրատարակութիւնն ունի ի նկատի և շեշտում է այս նոր հրատարակութեան առաւելութիւնները — Եզնիկի անձնատրութեան ո՛ր լինելը, նրա գրուածքի աղբիւրները և այլն։ Հեղինակի կարծիքով Եզնիկը «մի շատ հետաքրքիր և օտարութիւն մտաւոր է» և նրա լայնածած մտքերի մէջ Գէլցելը երբեմն տեսնում է ոչ թէ «բրիտանիայի և պրոպագանդի», այլ «հին հեթանոս հային»։ Կրօնների պատմութեան տեսակէտից նա Եզնիկի գրուածքի երկրորդ մասը անլի գնահատելի է համարում, որովհետեւ դա ամփոփում է պարսկական կրօնի հիմնական վարդապետութիւնները և որի վրայ էլ յարգելի հեղինակը բաւական երկար է կանգ առնում։

Արարաւ, յունուար, փետրուար։ Այս տարուանից, ինչպէս լատինի է «Արարատը» լատինացած է նոր խումբադրութեան, որ արդէն լոյս է հանել երկու համար։ Նոր մարդիկ,

նոր ուղղութիւն—այս սպասելի էր, մանաւանդ որ նոր խմբագրութեան անունով տրուած կաթողիկոսական կոնդակի մէջ պարզ ասուած է որ Եջմիածնի ամսագիրը պիտի մատչելի լինի ժողովրդին: Չէ կարելի, ի հարկէ, առել թէ Եջմիածնում չեն լինում և բարի մտքեր. բայց հաստատապէս կարելի է առել որ Եջմիածնում բարի մտքեր գործադրելու հող չը կայ: Դեռ նոր Վերաբառում լոյս չը տեսած, արդէն ըսկըսեցին ինտրիգներ նոր խմբագրութեան դէմ. շտապեցին, ով կարող էր, խոչընդոտներ լարուցանել, դժուարութիւններ սարքել, որպէս զի նոր մարդկանց արդել են և, եթէ կարելի է, վախցնեն: Հազիւ թէ այս հանգամանքների մէջ որ և է գործ կարողանալ կատարել Վերաբառում վերաբերմամբ ծագած բարի միտքը, թէ և այդ միտքը ամենայն հայց կաթողիկոսի ցանկութիւնն էլ լինի: Այսպէս է Եջմիածնի ճակատագիրը:

Մենք չենք ուզում մոռնել այդ հանգամանքի մանրամասնութիւնների մէջ, որոնք բաւական յայտնի են լրագիրներից: Աստեղծ միայն այսքանը, որ նոր Վերաբառում դեռ չէ կարողացել իր այդ երկու համարներով ցոյց տալ թէ ձգտում է մատչելի լինել ժողովրդին. նա դեռ շարունակում է դատողութիւնների ամսագիր լինել: Ինչ կը լինի ապագայում,—մենք չը գիտենք, բայց գիտենք որ շատ բան սպասել չէ կարելի նոր խմբագրութիւնից, քանի որ նրա ձեռքը միջոցներ չեն տալիս: Որքան գիտենք, Վերաբառում 2000 բաժանորդ ունի: Ենթադրելով որ այդ բաժանորդները վճարում են տարեկան 4 ռուբլի բաժանորդագինը, մենք պիտի ընդունենք, որ ամսագիրն ունի տարեկան 8 հազար ռուբլի եկամուտ. պակասեցնենք այդ գումարը նոյն իսկ մի հազար ռուբլով, դարձեալ կը

ստանանք մի լաւ գումար՝ Վերաբառում պէս մի բարակ ամսագիրը լաւ տանելու համար: Բայց խմբագրութիւնը միջոց չունի վարձատրելու աշխատակիցներին, նրանք միջոցներ չեն տալիս, բաւական համարելով յոյս դնել ազգասիրարարս աջակցութեան վրայ: Ահա մի հանգամանք, որ պիտի ջլատէ գործը և անպտուղ դարձնէ ամեն մի բարի միտք...

Փետրուարի համարում խմբագրութիւնը ուշադրութիւն է հրաւիրում կաթողիկոսական այն կոնդակների վրայ, որոնք տպուեցին լուսնուարի համարում և նրանց մէջ պարզ ու զրական ցումունքներ կան չհասկոթեան մասին: Այդ կոնդակներով ամենայն հայց կաթողիկոսը սահմանում է որ կոնսիստորիաները, առանց Սինոդին դիմելու, թոյլ տան ամուսնութիւններ խնամակալան հինգերորդ աստիճանում: Այդ թոյլտուութիւնը առաջներում չէ եղած, առաջին անգամ տեղապահութեան ժամանակ որոշ կանոնի ձև ստացաւ և այժմ կաթողիկոսական սանկցիացին ենթարկուելով, դառնում է հաստատուն օրէնք: Գալով ազգակցական ամուսնութիւններին, մինչև տեղապահութեան ժամանակը չէր թոյլատրում ամուսնութիւն ազգակցական կամ արեւնակցական եօթներորդ աստիճանում: Այժմ կաթողիկոսական կոնդակը օրինականացնում է տեղապահութեան ժամանակ միայն ձայների առաւելութեամբ մերժում աչդ աստիճանը, հրամայելով Սինոդին թոյլ տալ եօթներորդ աստիճանի ամուսնութիւնները, եթովհետև այդպէս է ժամանակի պահանջը: Շատ ուրախ ենք որ յժամանակի պահանջը կամայ-կամաց իր իրաւունքներն է ստանում Եջմիածնի գործերում: Միայն կոնդակով Վեհափառ Կաթողիկոսը բացատրել է թէ ո՛ր պատկանէր են անվաւեր և ո՛րոնք են ան-

թողատրելի։ Մի խօսքով, այժմ, դեթ թղթի վրայ, կալ ամուսնական հարցերի կարգադրում և «Երարաւոր» տոմս է թէ՛ արանով շատ մեծ չափով թեթեւանում է ժողովրդի վրայ ծանրացած լուծը, պակասում են ապօրինի կենակցութեանց և ապօրինի ղաակներին թիւը, և վերադառնում ենք երկար խարխալութեան լից լից մեր եկեղեցական կանոնադրութեան վերջին վճիռների ուղիղ գործադրութեանը՝ Այո՛, դա մի շատ ուրախալի երեւոյթ է, բայց մենք այժմից իսկ ուրիշանալ չենք կարող։ Օրէնքներ հաստատելը դեռ բաւական չէ։ ամենալիքաւորը օրէնքների գործադրութիւնն է։ Թիւրքիայում պաշտօնապէս ընտրուած է Նապօլեօնի կողէքսը, բայց ի՞նչ օգուտ, երբ այդ օրէնքի գործադրութիւն չը կալ։ Տարիների փորձը անթիւ օրինակներով ցոյց է տուել, որ եթէ մեր եկեղեցական վարչութեան մէջ տիրում է անկարգութիւն, խառնաշփոթութիւն, սրա մի գլխաւոր պատճառն էլ այն է, որ հողեր իշխանութիւնը ինքը չէ չարգել իր հրատարակած օրէնքները, ինքն է ստնակոխ արել իր սահմանադրութիւնները։ Ամենալաւ պաշտօնը—թեմական դպրոցների սահմանադրութիւնը, որ ամեն տարի նոր տեսակ փորձանքի է ենթարկում այն իսկ իշխանութեան կողմից, որ վաւերացրել ու հրատարակել է նրան, որ այժմ էլ դեռ չէ փոփոխել այդ սահմանադրութեան ծրագիրը, բայց բոլորովին անտես է անում նրանց։ Օրինակաւորութիւնը, այո՛, առաջին և անհրաժեշտ պայմանն է։ առանց այդ պայմանի չէ կարող պահուել մեր եկեղեցին, նրա գոյութիւնը վտանգուած կը լինի։ Բայց ի՞նչ է օրինակաւորութիւնը, երբ նա թղթի վրայ միայն գոյութիւն ունի։ Միտնեման կառավարութիւնը այն ժամանակ չէ միայն

բանակաւական, վարչերի, երբ ունի հաստատ օրէնքներ, որոնց ամենից առաջ ինքը, այդ կառավարութիւնն է չարգում և պաշտպանում։ Ամբողջ սրտով կը ցանկալինք որ մեր եկեղեցական վարչութեան մէջ հաստատ լինէր օրինակաւորութիւնը։ Հաստատե՞ք որ դոնէ ամուսնական հարցերի մէջ տանջանքները, զրգոհութիւնները ընդ միշտ վերացուած են դրական օրէնքների ոգով։ Չը կալ երաշխաւորութիւն մի աշխարհի հաւատ կազմելու համար։ Ուստի մենք առ այժմ, ողջունելով օրինակաւորութիւնը թղթի վրայ, դեռ չենք կարող ուրախ լինել, քանի որ չը դիտենք թէ ինչպէս կը լինի նրա գործադրութիւնը։

Հետաքրքրութիւն է ներկայացնում պ. Մանանդեանի «Մի դիտողութիւն հայոց ներքին կեանքի ուսումնասիրութեան վրայ» յօդուածը։ Այդտեղ այն՝ միանգամայն արդարացի միտքն է յայտնւում, որ մեր պատմութեան մէջ չը կալ ժողովրդի ներքին կեանքը, որ հայոց պատմութիւնը, արտաքին անցքերի պատմագրական ժողովածու է։ Միանգամայն ճիշտ է։ Միայն այժմ մենք չունենք իսկական պատմութիւն։ Եկեղեցական պատմութիւն, վարդապետների, ժողովների, կրօնական վէճերի, պատմութիւն մենք ունենք և նա շատ ճոխ է, բայց խեղճ ժողովուրդը անչափ է մնացել, նա չը կալ մեր անցեալի տարեգրութիւնների էջերում։ Ո՞վ պիտի նիւթեր մշակէ ժողովրդի պատմութեան համար—բանասիրութիւնը, պատասխանում է չօդուածագիրը։ Այո՛, բանասիրութիւնը։ Բայց մենք, ինչպէս երևում է, դեռ երկար և երկար ժամանակ չը պիտի մի դրական գործ ստանանք մեր բանասիրութիւնից։ Հայ բանասէրները այժմ կորած են լեզուաբանական և մատենագրական հարցերի լարելիւթոսում։ Ծեծւում են

մանր-մունր խնդիրներ, որոնք գուցէ միայն գրականութեան պատմութեան համար արժէք ունենան: Բայց մենք միայն գրականութեան պատմութիւնն չը պիտի ունենանք, այլ և կուլտուրական պատմութիւն, ժողովրդի պատմութիւն: Հատորներ են գրուել այն իսկապէս երկրորդական խնդիրը պարզելու համար, թէ արդեօք Փաւստոսը հայ էր թէ լոյն, բայց ոչ ոք չուսումնասիրեց, չը պարզարանեց Փաւստոսի զիրքը զուտ ժողովրդի նիստ ու կացի, նրա հասարակական և քաղաքական կեցութեան տեսակէտից: Եւ սակայն Փաւստոսը, իբրև այդպիսի ուսումնասիրութեան աղբիւր, եղակի է: Մեր բանասիրութիւնը քարացած է չորրորդ և հինգերորդ դարերի շրջանում. այդպիսից զուրա չը կայ նրա համար ոչխարճ և կարծես XIII կամ XV դարերը այնքան լաւ ուսումնասիրուած են մեզանում, որ նրանց մասին այլ ևս որևէ նոր բան ասել չէ կարելի: Այո՛, բաւական խեղճ է մեր բանասիրական ուսումնասիրութիւնը, և ի՞նչ կը լինէր մեր գրութիւնը, եթէ եւրոպացի հայագէտներ չը լինէին: Մենք աս ալժամ չենք պարծենում որ բանասիրական գիտութիւն ունենք մեր մէջ և նրանով զբաղուողների թիւը մէկ չէ, երկու չէ:—Որ բանասիրութիւնը շատ է կղզիացած, շատ է միամիտ իր մասնագիտութեան մէջ, յրա մի ասպցոյց հէնց ինքը, պօղոսածածկուրը: Նա վրդովուած է, օրինակ, այն բանի դէմ, որ համարեալ ամեն մի գրքում, ամեն մի յօդուածում կարելի է «կարդալ այսպիսի մի կարծիք, իբր թէ հայոց նախարարների անմիաբանութիւնն է հայաստանի կործանման պատճառը»: Ուրեմն այդպէս չէ: Յօդուածագիրը չէ կարողանում զանազանել, որ այլ է փառքը, երեւոյթը, այլ է նրա պատճառը: Նա ասում է թէ նախարարական—ֆեօդալական

«կաղմակերպութիւնը ոչ մի ազգութեան մէջ մօզական գաւազանի շարժումով չէ փոխուել, այլ բարոյական, իրաւական և տնտեսական որոշ դարգացման շրջանում և աշխարհագրական ու քաղաքական որոշ պայմաններում անխռատփելի անհրաժեշտութիւն է եղել»: Յետոյ՝ Միթէ այդ անհրաժեշտութիւնից այն է դուրս գալիս, թէ չէ կարելի ասել որ նախարարները անմիաբան էին, թէ այդ անմիաբանութիւնը կործանման պատճառ էր: Երբ դուք կարդում էք Վահան Մամիկոնեանի հերոսական պատերազմների պատմութիւնը և երբ տեսնում էք որ նրա դէմ կռուողների թւում է Սինեաց նախարարը, միթէ դուք չէք ասում որ այդ կռիւները չէին լինի, եթէ այդ երկու նախարարները միաբան լինէին: Սա փաստն է, պատերազմի դաշտի իրականութիւնն է. մենք նրան կ'արձանագրենք առանց վրդովուելու և ապա երբ աւերող սիստեմի էութիւնը կը սկսենք պարզել, երբ կը քննենք պատճառները, այն ժամանակ, ի հարկէ, կ'ասենք որ ֆեօդալական սիստեմը ուրիշ զրութիւն չէր էլ կարող ստեղծել մեր երկրում:—Պ. Մանանդեանի բերած այդ օրինակը անաջող է: Այնուհետև նա մի քանի ակնարկներ էլ է անում, օրինակ, ասում է. «Մայր Աթոռի գործունէութեանը և մեր եկեղեցու ալժման զրութեանը մի փոքր ծանօթ լինելով, խօս լաւնկատում ենք թէ եւրեմն մեր հասարակային գործիչները որքան անտեղեակ են եկեղեցական երեւոյթների լաւ ու վատ կողմերին, և ո՛րքան կիսատ և թիւր հասկացողութիւններ են ունենում ազգային եկեղեցու իրական բարիքների և պահանջների նկատմամբ»: Մենք կը կամենայինք իմանալ թէ ինքը, պ. Մանանդեան որքան լաւ տեղեակ է այդ կարիքներին և զրութեան, բայց, տարաբախտաբար

նա ոչ մի փառս չէ բերում, ոչ մի օրինակ չէ լիշատակում Եսկ բառերին, իսկ բառերի դէմ միայն բառեր կարելի է հանել, մի բան, որ մենք չենք կարող անել Նաո գեղեցիկ կը լինէր, եթէ «Արարատը» խոյս տար անորոշ բառերից, վերացական դատողութիւններից և միշտ խօսէր փաստերի ու իրողութիւնների լեզուով: Ոչ մի ուրիշ լեզու սրա պէս ազգու և հասկանալի չէ լինում:

—

Բազմալէզ, ապրիլ Հետաքրքրութեամբ կարդացում է «Մի' վհատիք» խմբագրականը, որի մէջ արտայայտուած մտքերը համակրելի են: Այս համարում գտնում ենք երկու գրական կենսագրութիւն — Քերովյէ Պատկանեանի և Նազար Գորոյանի: «Պարին և Երկրաշարժը» յօդուածում նկարագրուած է Երզրումը: Անցեալ տարուայ երկրաշարժի հետեանքները նկարագրում են հետեանալ տողերը. «Հազարատը տուներ դէպի գիւղեր կ'առաքուին, ուր արկածն քիչ ըրեր է իր աւերներն, և կը հայթաթուի յանձնաժողովներով իրանց կենսական փոքրիկ ոգեպահիկն» մի անհատի համար միայն կէս չափ հաց ամբողջ օրուան մը համար: Հազարատը տուներ ալ որ հարթ լատակ դարձեր են, կ'որոշուի անոնց տեղ գրեթէ 2500 կանգուն երկայնութեամբ տեղւոյ վրայ տախտակէ տնակներ բարձրացնել ամիսիկելու համար մէջտեղ մնացածներն: Ինքնօրնութիւնը աստիճան մը զարման կը մատուցանէ. բարերար և աղին հողիներ կ'երազեն կ'երակակոյն: Վարնոյ աստիճան ձմեռը և խեղճութեան անհունութիւնը և բաւ չեն համարիր միանգամ ողորմելը, ալ կրկին և կրկին չեն խնայիր իրանց փողերը: ... Այս օրերուս մէջ յօդուած նամակ մը կ'ըսէ, որ դեռ սասանութիւնք ըղորովին չեն դադարած,

բայց առաջուան սաստկութիւնը և աւերածը չկայ: Աղքատութեանց, հիւանդութեանց հետեութիւնք աննկարագրելի են: Ա. Փափաղեանի «Հայ բռններ» փոքրիկ յօդուածի մէջ մեզ դուր չեկաւ հեղինակի ինքնագովութիւնը, կարելի է 10 տարի ուսումնասիրել բռնների կեանքը, կարելի է գրել ուսումնասիրութիւն, ներկայացնել Մոսկուայի ազգադրական ընկերութեան և ստանալ նրա հաւանութիւնը, բայց ի՞նչ կարիք կայ այդ ամենը պատմել հինգ երևից ըզրկացած մի յօդուածում: «Գիտնական սխտեմ», «կատարեալ» գործ — այդ անունները աւելի քան աւելորդ ինքնագովութիւններ են մի այդպիսի փոքրիկ աշխատութեան մէջ: Յիշենք և «Հայկական հին սովորութիւն մը» յօդուածը, որի մէջ չաշտնուած է այն միտքը, թէ մեր «մատաղը» հին հեթանոսական մի սովորութիւն է, «այլ չետոյ նուիրագործած, քրիստոնէացած է քրիստոնէական կրօնից օժմամբ»:

—

Համիդէն Էմ Բաօրեայ, ապրիլ: Շարունակում է ղօլտօր Նահապետ Ռուսինեանի հետաքրքրական կենսագրութիւնը: Այս համարում տըպուած մանրամասնութիւններից մենք իմանում ենք որ Ռուսինեան մի խիզախ վերանորոգիչ էր, մի ինքնատիպ բնատրութիւն, որ տողորուած լինելով ֆրանսիական չեղափոխութեան գաղափարներով, ամեն կերպ աշխատում էր մի նորութիւն մտնել հայ ազգի ճահճացած կեանքի մէջ: Ահուական քաղաքականութեան մասին անցեալ անգամ գրեցինք: Այժմ աւելի մանրամասն կերպով է խօսում կենսագրողը այդ գործի մասին, բերելով կրտորներ Ռուսինեանի «Ուղղախօսութիւն արդի հայ լիզովին» գրքից, որ իր ժամանակին մեծ աղմուկ է բարուցել: Բնորոշ է, որ այդ համարձակ ընթերցանութիւնը դէմ գիտունց

հայ հոգևորականութիւնը. «Հայ կրդիական դասը, Պատրիարքը, հոգևոր ժողովը ու Գերագոյն ժողովը ստակամով սասանեցան, ահաբեկելով ահաբեկեցան և սկսան «Ողբախօսութեան» դէմ պարսաւանքներ կարգալ ու մինչև անգամ զայն բանալիելու պատրաստութիւնը եւ սակալն Ռուսիեանի դործը լոկ մի առաջարկութիւն էր, որի ընդունելը կամ չընդունելը զիտնական քննադատութիւնից էր կախուած: Նոյն տեսակ ընդունելութիւն գտաւ և Ռուսիեանի առաջարկած բէֆօրմը օրացոյցի մէջ: Հետեւելով ֆրանսիական լեզուախոսութեան ժամանակ գոյութիւն ունեցած տոմարին, Ռուսիեանը առաջարկում էր տարեգլուխը սկսել մարտի 21-ից (հ. տ. 9-ից), երբ զարնանային դիշերահառատութիւն է լինում. ամիսների անունները նա փոխում էր այսպէս. «Միամիս, երկամիս, եռամիս, Բառամիս, Հնգամիս, Վեցամիս, Տօթամիս, Ութամիս, Իննամիս, Տասամիս, Տասմիամիս, Տասերկամիս. բացի զրանից, նա իւրաքանչիւր ամիս համար հնարել էր հայերէն անուններ, հետեւելով լեզուախոսութեան ժամանակ ընդունուած ամսանուններին: Այսպէս, զարնանային ամիսների համար նա հնարել էր «Բուսին, Ծաղկին, Մարգին», տմառային ամիսների համար՝ «Հնձար, Տօթար, Պտղոտ», աշնանային ամիսների համար՝ «Վթօն, Թափօն, Միգօն», իսկ ձմեռային ամիսների համար՝ «Ջիւներ, Սառներ, Մրկեր»: Այս բէֆօրմը, ի հարկէ, չընդունուեց, բայց հարցը այնքան ընդունելութեան չէ վերաբերում, որքան բնորոշում է վերանորոգումների տենչանքներով տոգորուած այդ գործիչին: Յիսուսական թուականների վերջերում եթէ չը լինէին այդպիսի խիզախ և համարձակ վերանորոգիչներ, թիւրքահայերի մէջ, ի հարկէ, չէր ըս-

կուի այն հսկայական մրցումը, որի արդիւնքն էր 1860-ի ազգային սահմանադրութիւնը: Թաթուլ Վանանդեցու այս անգամուայ «Գրական թղթակցութիւնը» մերկացնում է Վ. Պօլսի հայոց մամուլի մի զարհուրելի ախտը—զրական կեղծիքը: Այդ լօղուածը, ինչպէս և միւս թղթակցութիւնները, կարգացում է հետաքրքրութեամբ—Ապշեցիւք, կարգալով մատենախօսական բաժնի մէջ հազարի ներքողներ, նուիրում ըմբիշ Շահ-Նուգարիսանցին: Բանից դուրս է գալիս որ երևանում մի քանի ամիս տեսչութիւն արած այդ պարեր. «մանկավարժական շրջանակներու մէջ ծանօթ դէմք» է, որ նա, «պարոյցի անդու ու անխոնջ վաստակատր» է «տարիների ի վեր» և ուլն և ուլն: Ինչ մեծ զիտեր անել զիտն Միսթարեան վարդապետները: Այսպիսի ծիծաղաշարժ զիտերի արժէքը Թաթուլ Վանանդեցու վերալիշեալ գրական թղթակցութեան մէջ կարելի է գտնել, որովհետև նրանք պարզապէս են «գոլաստանականներու շարք մը» չափարցներ, չափ: Ինքն իրան ծեծում է «Հանդէս Ամսօրեան»:

«Навизский Вѣстникъ», սարկի ի. Սէզալ պատմում է իր տպաւորութիւնները և լիշողութիւնները Գանձակի նահանգում կատարած իր ճանապարհորդութիւններից: Այս անգամ նա խօսում է Շուշու մաթին և բաւական ճիշտ գոյներով նկարում է կեանքը այդ գաւառական խոշոր կենտրոնում: Հետաքրքրական է մանաւանդ թուրք աշնուականութեան կենցաղի նկարագրութիւնը: Թուրք աշնուականութիւնը (բէկերը) շատ բազմաթիւ է նախկին Վարաբաղի խանութեան մայրաքաղաքում: Հեղինակը մի պատմական հայեացք է գցում այդ դասակարգի անցեալի վրայ, լիշատակում է թէ ինչպէս

Փանահ խանը հողեր և բէկական տիրոջոյններ էր բաժանում թուրքերին, բայց մոռանում է լիշատարելը, որ Աւարաղլի հողերը հայերին էին պատկանում և առղակապետութիւնից խանութեան հասած Փանահը, և մոռանալով նրա որդի Իրաշիմը, խլում էին հողերը հայ մելիքներից և տալիս էին իրանց ծառաներին և ջորեպաններին: Քէն հայ մելիքները Պաւլ կաշարի հրովարտակով ճանաչուած էին երկրի իսկական տէրեր, բայց երբ Աւարաղլը անցաւ առաջ տիրապետութեան տակ, կալուածատիրական իրաւունք ստացան միայն նրանք, որոնք խաներից թուղթ ունէին: Այդպիսի թղթեր համարեա միայն թուրքերն ունէին, այդ պատճառով էլ նրանք դարձան սեփանատէրեր, իսկ մելիքների ժառանգները կամ շատ աննշան հողատէրներ ստացան կամ հարկատուների կարգում զրուեցան: Մեծ չարիքներ պատճառեց այդ գործում յայտնի հերոս իշխան Մաղաթովը, որ Աւարաղլի կառավարիչն էր և Մէհտի-խանից զիւղեր ու մեծամեծ կալուածներ առնելու համար ուժ էր տալիս խանական իղթիւրին, իսկ ժառանգական իշխող մելիքների որդիներն ու թոռները զուր տեղից զանդատներ էին տալիս կառավարութեան: Ահա այդպիսով է առաջացել այն դրութիւնը, որ մի քանի բէկեր ունեն այնքան շարժական կալուածներ, որքան չունեն նոյն-իսկ գերմանական մի քանի դքսութիւնները — Բէկական դատակարգը ներկայումս մի անշարժ պահպանողական տարր է, որ սովորել է ճիւղակերութեան, չէ աշխատում, կալուածական առաջադիմութեան չէ ձգտում, այլ միայն անց է կացնում իր կեանքը ժողովրդական և պարսպութեան մէջ: Բոլորովին այլ տեսարան է ներկայացնում հայ ժողովուրդը. նրա

նոր սերունդը, մանաւանդ քաղաքում, ամեն կերպ աշխատում է կերպարանափոխել իր կեանքը նոր ժամանակի պահանջների համեմատ և նմանութիւն գտնել այդ երկու դրացի ժողովուրդների մէջ շատ դժուար է — քիչադասակէնք պիտի սօր Մառի յօդուածը «Մնացորդաց Գրքի» նորագիտ մի օրինակի մասին և անցնենք մի փոքր կ'նկատողութեան: «Մուրճին» նուիրուած մի փոքրիկ յօդուածի մէջ գտնուած է նաև հետեւել իրողութիւնը: Խօսելով ծուրգեմեծի ժողովուրդին վէպի թարգմանութեան մասին, յօդուածագիրը բերում է սխալ թարգմանութեան մի օրինակ և շտապում է այն եղբակադրութիւնն անել, որ թարգմանիչը լաւ չէ խմանում ռուսերէն: Բայց ցան աչն է, որ ցոյց տուած օրինակը արդիւնք է մի տպագրական սխալի: Տպուած է. «նա հազած էր» չքնաղ վարդազոյն զգեստ, որ ունէր կուսփիր...», բայց պէտք է լինէր «և ունէր»: Գուցէ այդ տպագրական սխալը յօդուածագրի համար մի մեծ ապացոյց է, որ թարգմանիչը չէր գիտէ ռուսերէն, բայց մեզ համար և իւրաքանչիւր անկողմնապահ ընթերցողի համար էլ այն է պարզ, որ յօդուածագիրը այդտեղ իրան թոյլ է տուել մի անտեղի բժականորութիւն: Մենք պէտք է խոստովանենք, որ «Մուրճի» սրբազրութիւնը, չէր նախած մեր գործը դրած բոլոր ջանքերին, շատ հեռու է կատարեալ լինելուց, բայց շահագործել այդ տպագրական սխալները արդէն բժականորութիւն է...

«Вѣстникъ Всемірноѣ Исторіи» մարտի Ռուս լայտնի գիտնական Մակսիմ Սովալեւսկի տպագրել է մի հետաքրքրական յօդուած՝ «Նախնիքների երկարագելը կովկասեան ազգերի մէջ»։ Խօսքը զլիսաւորապէս կովկասեան լեռնաւանդների

մասին էլ Պ. Կովալեվսկի անձամբ հետազոտել է մի քանի ցեղերի սովորութիւնները և զալիս է այն եզրակացութեան, որ զրանց մէջ միանշանակ էլ մնացել է նախնիքների հին պաշտամունքը։ Քրիստոնէութիւնը չը կարողացաւ արմատախիլ անել այդ հին սովորութիւնը, ուստի և հարկադրուած եղաւ ընդունել նրան, քրիստոնէացնել։ Յարգելի գիտնականը նկարագրում է և օջախի պաշտամունքը, որ, ինչպէս յայտնի է, սերտ կապուած է նախնիքներին պաշտելու սովորութեան հետ։ Հին արիական ազգերը, ինչպէս գեղեցիկ կերպով պատկերացրել է Ֆրատէլ դը-Վուլանժը, հաւատում էին, որ մեռելը շարունակում է ապրել և գերեզմանի մէջ. և կենդանի մնացողների պարտքն էր այնպէս անել, որ գերեզման մտած մարդը քաղցած չը մնայ, իսկ այդպիսի դրութիւնից մեռելներին ազատելու համար պէտք էր գոհարբութիւններ անել մեռածների գերեզմանների վրայ։ Զօհաբերութիւն անելը կենդանի մնացող ժառանգների պարտքն էր։ Այս պատճառով ամեն մէկը, հանդերձեալ աշխարհում զրկուած ու մոռացուած չը մնալու պատճառով, պիտի իր սեփական օջախը հիմնէր։ Օջախի պաշտամունքը—դա կրօնական, իրաւական և հասարակական հասկացողութիւնների մի ամբողջ օրինադիրք էր։ Եւ հետազոտելով ժողովրդի այժմեան սովորութիւններն ու տանդութիւնները, շատ կարելի է գտնել հին պաշտամունքի հետքեր։ Պ. Կովալեվսկի տաւում է, որ կովկասեան լեռնականները նախնիքների և օջախի պաշտամունքը իւրացրել են Զենդ-Ավեստայի ազգեցութեան տակ։ Եւ որովհետեւ հին պարսկական կրօնի բոլոր էութիւնը զեռ ըստականալի պարզուած չէ, ուստի ժողովրդ-

դական այժմեան սովորութիւնները կարող են հարուստ նիւթեր տալ Զենդ-Ավեստայի սահմանած աշխարհայեացքներն ու օրէնքները բացատրելու համար։

Հայ ժողովրդի մէջ էլ կան բազմաթիւ սովորութիւններ, որոնք ապացուցանում են անհերքելի կերպով թէ նոյն օջախի, նախնիքների պաշտամունքն էլ մեր հին կեանքի հիմքն են կազմել։ Եթէ ընդունենք, որ Զենդ-Ավեստան է մեզ այդ պաշտամունքը սովորեցրել, այն ժամանակ կարող կը լինենք ոչ միայն հայոց հին հաւատի մասին աւելի լայն ու պարզ հասկացողութիւններ կազմել, այլ և կ'որոշենք այն ազգեցութեան չափը, որ ունեցել է պարսկական կուլտուրան հայերի վրայ։ Սակայն Ֆրատէլ դը-Վուլանժը ապացուցել է, որ նախնիքների, օջախի պաշտամունքը գոյութիւն ունէր և լուսնների ու հոռմայեցիների մէջ. նա գտնում է, որ այդ պաշտամունքը արիական ազգերի նախնական կրօնն է։ Եթէ այդպէս է, ուրեմն պ. Կովալեվսկու ցուցմունքները մի նոր հետաքրքրութիւն են տալիս Զենդ-Ավեստային. դուրս կը գայ, որ պարսկական մազդեզականութիւնը այն ընդհանուր արիական հաւատալիքների և զաղափարների ժողովածուն է, որոնք գոյութիւն ունէին արիական ցեղերի մէջ։ Նախ քան նրանց զանազան կողմեր ցրուելը։ Այս դէպքում, ի հարկէ, հարց չի լինի այն մասին թէ կրօնական հաւատալիքները այս կամ այն արիական ցեղը փոխ է առել պարսկներից, այլ պէտք կը լինի աւել, որ իւրաքանչիւր ազգ պահպանել է ընդհանուր տեղական պաշտամունքը իր նախնական ձևի մէջ, առանց նորից սովորելու այս կամ այն ցեղակից ազգից։ Յամենայն դէպս, այս գիտնական հետազոտութիւնները պիտի պայծառ

լուս սփռն մեր անցեալի վրայ, պարզելով մեր կրօնական և համայնական պատկերը հին դարերում։ Առաջ եւ առանձին անհրաժեշտութիւն կայ ուսումնասիրելու, հաւաքելու մեր ժողովրդական սովորութիւնները։

„Миръ Божій“, ապրիլի փետրուարի 20-ին վախճանուեց այս ամսագրի հրատարակչուհի Ալեքսանդրա Դավիդովան։ Երեք յօդուած կան նոսիրուած հանգուցեալի յիշատակին, որոնք ցոյց են տալիս թէ որքան հաղուագիտ, որքան համակրելի գործիչ էր նա։ Մեղանում, հալեթի մէջ, հրատարակչական գործը չունի մի անձնուր, եռանդոտ աշխատող և այդ պատճառով էլ մեղանում առաջ չէ գնում զրականութիւնը։ Առաջի մասնաւոր մեզ համար հարկաւոր է ծանօթանալ հանգուցեալ Դավիդովայի հետ։ Դա, այո՛, մի զարմանալի աշխատատեղ էր. մի մարդ էր, որ իր սրտի ու հոգու ամբողջ կարողութեամբ նւիրուած էր իր ամսագրին և ոչինչ չէր խնայում նրան առաջ տանելու, զարգացնելու համար։ Ամսագիրը հիմնուած է 1891 թուականին. նրա նպատակն էր ինքնակրթութեան նիւթ տալ միջին ընթերցողին։ Ուստայ գրականութիւնը մի ծով է, որի մէջ հարկաւոր այդպիսի ձեռնարկութիւններ են սկըսում, քայքայ շուտով կամ կորչում են, կամ մի ողորմելի գոյութիւն են պահպանում։ Այդպէս չէր Դավիդովայի սկսած գործը։ Ամենքին յայտնի է թէ որքան համակրելի, գեղեցիկ ամսագիր է „Миръ Божій“-ն։ Տասը տարուայ ընթացքում անդադար կատարելագործուելով, ամսագիրը այնքան համակրութիւն գրաւեց, այնքան հռչակ ստացաւ, որ այսօր ոչ մի ռուսերէն ամսագիր նրա չափ չէ տարածուած։ Եւ այդ ահագին աջողութեան գլխաւոր պատճառը

հանգուցեալ Դավիդովան էր, աննկատելի մի հերոս, որ թէև մի տող անգամ չէ զրեւ ամսագրի մէջ, բայց օր ու յիշեր մտածել և գործել է նրա համար։ Դա մի զարմանալի աշխատատեղ էր։ Գրաւել աշխատակիցներ, ուղղութիւն տալ ամսագրին, մի խօսքով ղեկավարել գործը, ողնորել աշխատողներին իր քաղցր վերաբերմունքով — ահա ինչպէս նա անուն ստեղծեց իր և իր ամսագրի համար։ Իսկու կրթութեամբ, զարգացած կին, նա կարգում էր բոլոր յօդուածները, կարգում էր օտար լեզուներով դուրս եկող հրատարակութիւնները, որոշում էր թէ ինչը պէտք է թարգմանել և առանց նրա գիտութեան, առանց նրա համաձայնութեան մի տող անգամ չէր տպագրուում ամսագրի մէջ։ Վհատել, թուրանալ անաջող հանգամանքները նա չէր գիտէր։ Հաւատարմիմ մնալով մի անգամ ընտրած ուղղութեան, նա չէր թող տալիս որ ամսագիրը մազի չափ շեղուի այդ ուղղութիւնից և միշտ ասում էր թէ պատրաստ է իր ձեռքով սպանել ամսագիրը. քան զաւանանել որոշուած ընդունուած ուղղութեան։ Մի կնոջ մէջ այդպիսի երկաթէ կամքը, այդպիսի գիտակցական գործունէութիւնը ապշեցնող, հիացնող տպաւորութիւն է թողնում։ Մանրամասն նկարագրուած է նրա գործունէութիւնը և մենք տեսնում ենք, թէ որքան համեստ էր այդ մարդը, որպիսի գեղեցիկ գաղափարներով տոգորուած։ Հաւատալով իղէալին, հաւատալով իր գործին, նա կանգ չառաւ ոչ մի դժուարութեան առաջ, նրան չը վախեցրին այն հարկաւոր խոչընդոտներն ու խաթները, որոնցով ի է ամսագրի հրատարակութեան գործը։ Ամեն տեղ լաղթում էր նրա սուրբ, վառվառն սէրը, ամեն տեղ նա իր չարաբանքների գնով ոչնչացնում էր անաջող հանգա-

մանքները և իբրև սիրավառ մայր՝ առաջ էր տանում իր զաւակը, զարգացնում, մեծացնում էր նրան։ Այսպէս կարող են գործել միայն զգալաւորի զինուորները, միայն նրանք, որոնք անուան, վառքի, նիւթական աջողութիւնների ետեւից չեն վազում, այլ իրանց կեանքի նշանաբանն են համարում ծառայել զաղափարին, զոհուել նրա համար լսնուն հասարակաց բարիքի։

Թող կորչի անունը, բայց մնայ գործը՝, գրում էր մի ֆրանսիացի հեղինակ։ Հանդուցեալ Դաւիդովան այս դասնութեան էր ծառայում իր հոգու ամբողջ ուժով։ Նա մեռաւ 53 տարեկան հասակում։ Նա ամուսնացած էր յայտնի երաժշտագէտ Դաւիդովի հետ և շատ լաւ լսաւոր էր Պետերբուրգի արտիստական և գրական աշխարհին։ Նրա սալօնում հաւաքւում էին ռուսաց գրականութեան սիւները—Տուրգենեւ, Գոնչարով, Գարշին և ուրիշները։ Այդ շրջանների մէջ ամրացնողն էր նրա վառ սէրը զէպի գրականութիւնը։ Այո՛, միայն սէր է հարկաւոր, եթէ կայ այդ աստուածային պարգեւը, կը լինի և կենդանի, զեղեցիկ գործը, թէև սիրահարուածը գրող էլ չը լինի։ Գրականութեան զարգացման համար միայն գրողներ չեն հարկաւոր, անհրաժեշտ են և աշակերտ վաւառն գործիչներ, որոնք գործ ստեղծէին գրողների համար, ծառայէին նրանց հետ միասին հասարակական բարիքին։ Սորա կէսը, կէսի կէսը գէթ երևար մեր ազգում, լիշեցինք մենք բանաստեղծի այս խօսքերը, կարդալով հանդուցեալ Դաւիդովայի համակրելի գործունէութեան նկարագրութիւնը։

Русское Богатство, մարտի Գլէր Ուսպէնսկուն նուիրուած բազմաթիւ լիշողութիւնների մէջ ուշադրութիւն է գրաւում լսաւորի ռուս քննա-

դատ Ն. Միխայլովսկու յօդուածը, որ անուանուած է «Նիւթեր Գ. Ի. Ուսպէնսկու կենսագրութեան համար»։ Ուսպէնսկին շատ մօտիկ էր Միխայլովսկուն։ Օգտուելով հանգուցեալի նամակներից, լարգելիքնադատը տալիս է մի քանի գծեր, որոնք նկարում են Ուսպէնսկու բարոյական զեղեցիկ զէմբը։ Նա շարունակ թափառում էր, շարունակ ճանապարհորդում էր՝ մարդիկ, կեանք, տիպեր տեսնելու համար։ Նա վերին աստիճանի համեստ էր, ստատիկ վրդովում էր, երբ իրան պատրիւներ էին անում իբրև լսաւոր, տաղանդաւոր գրողի։ Ուրիշի դարձը, ուրիշի ցաւը Ուսպէնսկին իր սրտին շատ մօտ էր ընդունում, աշխատում էր ամեն կերպով ուշադրութիւն դարձնել ժողովրդի դրութեան վրայ, օգնել նրան։ Պ. Միխայլովսկու բերած նամակներից երևում է թէ որքան վառ սէր ունէր նա զէպի ժողովուրդը, այո՛, այդ ժողովրդի ցաւերը, նրա կեանքի մէջ գործող երեսութիւնները ամենազերիւն էին, որտեղից այդ ասքոր, մարդասէր հոգին քաղում էր անսպառ ոգևորութիւն իր զեղեցիկ գրուածքների համար, որոնք այնքան լաւ լսաւորի են ամբողջ ընթերցող Ռուսաստանին և դեռ երկար չեն մոռացուի։

Պ. Միխայլովսկի խօսում է և հանգուցեալ Դաւիդովայի մասին և իր յարգանքն է մատուցանում այդ նշանաւոր գործիչ կնոջ լիշառակին։

Մեակ, №№ 79, 79, 1. 8.

Սպենդարեան «Հայաց եկեղեցական ծուխի իրաւասութեան խնդիրը» ուսումնասիրութիւնը վերջացնում է հետեւեալ ընդհանուր եզրակացութիւնով.

«Մեր բոլոր ասածի համառօտ résumé-ն, որ բղխում է վերև լիշուած օրինական հիմունքներից, հետեւեալն է. ա) եկեղեցական-ծխա-

կան համայնքը մի իրաւասու մարմին է, որին պատկանում է եկեղեցւոյ տնտեսական վարչական գործերի կառավարութիւնը. բ) երէցփոխը, իբրեւ ծխական համայնքի ընտրեալ և լիազօր հաւատարմատար, գործում է ծուխի անունից և նրա հաւանութեամբ. գ) վիճակային ատենանք, որի հսկողութեան տակ է գտնուում վիճակի եկեղեցական սեփականութիւնը, հսկում է և ոչ անմիջապէս կառավարում. նա իրաւունք ունի միջամտել եկեղեցական-ծխական գործերին միայն ա՛յն դէպքում, երբ նկատում է որ և է ապօրինի գործողութիւն երէցփոխի կողմից. դ) երէցփոխը իրաւունք չունի առանց ծուխի գիտութեան և հաւանութեան կատարել հոգևոր իշխանութեան պաշտօնական առաջարկները. եթէ ծագի որ և է անհամաձայնութիւն ծուխի և կօնսիսատօրիայի մէջ, գործը լանձնուում է Եջմիածնի սինօդի հայեցողութեան և կարող է հասնել մինչև Վատավարչական Վեհաօ, եթէ գործից Օրէնքի մեկնութեան խնդիր է լարուցում. ե) հսկողութիւնը երէցփոխի պաշտօնավարութեան վրայ պէտք է լինի ոչ ձևական, այլ իրական, ուստի հոգևոր ատենանք պարտաւոր է ունենալ մի մասնագէտ հաշուապահ

և նրա միջոցով կատարել երէցփոխական հաշիւների քննութիւնը, իսկ ծուխը իր միջից ընտրում է հաշուետեսների մասնաժողով, որ քննում է երէցփոխի տարեկան հաշիւը և ապա ներկայացնում պատճառաբանեալ ղեկուցում ծխականների ընդհանուր ժողովին և դ) երէցփոխը պարբերաբար ծխականներին ժողովի է հրաւիրում ընթացիկ նշանատր խնդիրները կարգաւորելու համար. Այդ խնդիրները շարքում կան աշխատիւնները, որոնք հէնց այժմ կարօտ են ծուխի շտապութիւն լուծման, իբրեւ ընթացիկ կեանքի անողոք պահանջներ, ինչպէս, օրինակ, միաբան-քահանաների նիւթական ապահովութեան խընդիրը, ներդաշնակ երդեցիկ խումբ և հմուտ խմբապետ ունենալը. ծուխի շրջանում գտնուած անկեղծներին և աղքատներին խնամելը, կըրթուած քարոզիչներ հրաւիրելը, եկեղեցական կարգապահութիւն մըտցնելը, եկեղեցում թաքախ ման ածելու տղիղ սովորութեան վերացումը, եկեղեցական արխիվ հիմնելը և այլն. ո՛րքան աշխատի հանրօգուտ գործեր ունի անելու ծուխը, եթէ նրա առաջ ձևական պատճեններ չը դնենք...